ՀՀ Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար

1.ՀՀ Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-2/:Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ՝ իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող ոռոգման ցանցերի շահագործումը, մասնակցում է դրանց շինարարության, վերանորոգման աշխատանքներին:Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի, հիվանդությունների, վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները:

Առաջատար մասնագետն ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝ համաձայն պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա)միջնակարգ կրթություն առանց աշխատանքային ստաժի

բ)պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ‘բ’ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2013թ. հունվարի 10-ին, ժամը 13,00-ին, Մրգաստանի գյուղապետարանի շենքում:

Դիմող՝ ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս/:
- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:
- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ.-ի մարտի 3-ի N310 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
- Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
- Արական սեռի անձինք զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր ու զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները:
- Մեկ լուսանկար 3x4 չափսի:
- Անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզ Մրգաստանի գյուղապետարան /հեռ.0231-6-38-10/ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն:/հասցե Աբովյան փ. 71 հեռ 0237-2-07-70/

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից ժամը 10-00-ից 14-00:Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2012թ. դեկտեմբերի 20-ը: